

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ  
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

### Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացու-  
թյունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Վիկտոր Դալ-  
լաքյանի, Վարդան Բոստանջյանի և Արմեն Աշոտյանի` օրենսդրական նախաձեռնության կարգով  
ներկայացրած «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության  
օրենքի նախագծի վերաբերյալ:

1. Ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից Հայաստանյայց Առաքելական  
Սուրբ եկեղեցու կամ կրոնական այլ կազմակերպությունների դավանական պատկանելիության  
վանքերի, եկեղեցիների կամ պաշտամունքային այլ շինությունների կառուցման վերաբերյալ  
գտնում ենք, որ շինությունները չեն կարող համարվել որևէ կրոնական կազմակերպության դա-  
վանական պատկանելիության, քանի դեռ չեն օծվել համապատասխան կրոնական կազմակեր-  
պության կողմից: Ուստի, դրանք մինչև օծվելը, սովորական քաղաքաշինական կառույցներ են,  
որոնց կառուցման համար կրոնական կազմակերպության հետ խորհրդակցելու դրույթն օրենքով  
ամրագրելու անհրաժեշտությունը չկա: Այս խնդիրները վերաբերում են քաղաքաշինության  
բնագավառին և կարգավորվում են «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության  
օրենքով:

Ինչ վերաբերում է ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից Հայաստանյայց  
Առաքելական Սուրբ եկեղեցու կամ կրոնական այլ կազմակերպությունների դավանական պատ-  
կանելիության վանքեր կամ պաշտամունքային այլ շինություններ ամրակայելուն, նորոգելուն  
կամ վերականգնելուն, ապա խնդիրը պետք է կարգավորվի տվյալ կառույցի սեփականատիրոջ  
հետ: Այդ առումով անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Հայաստանի Հանրապետության տարածքում  
գտնվող բոլոր Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու դավանական պատկանելիության  
վանքերը կամ պաշտամունքային այլ շինությունները հանդիսանում են Հայաստանյայց

Առաքելական Սուրբ եկեղեցու սեփականությունը, ուստի դրանք ամրակայելու, նորոգելու կամ վերականգնելու աշխատանքները կարող են իրականացվել միայն Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու նախաձեռնությամբ կամ համաձայնությամբ:

Պատմական հուշարձանի կարգավիճակ ունեցող վանքերի, եկեղեցիների կամ պաշտամունքային այլ շինությունների ամրակայման, նորոգման կամ վերականգնման ընթացքում ծագող հարաբերությունները կարգավորվում են «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, և այդ աշխատանքները կարող են իրականացվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր պետական կառավարման մարմնի թույլտվությամբ:

Ասվածից հետևում է, որ նախագծով ներկայացված հարաբերությունները «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կարգավորվող հարաբերությունների առարկան չեն:

2. Նախագծից պարզ չէ, թե քաղաքաշինության բնագավառի կառավարման լիազորված պետական մարմնի ինչ եզրակացության մասին է խոսքը, քանի որ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությունը նման եզրակացություն չի տալիս:

3. 1-ին հոդվածը չի բխում «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներից, որոնց համաձայն իրավական ակտի բաժինների, գլուխների, հոդվածների, մասերի, կետերի, ենթակետերի կամ պարբերությունների միջև համապատասխանաբար նոր բաժին, գլուխ, հոդված, մաս, կետ, ենթակետ կամ պարբերություն կարող է լրացվել միայն լրացուցիչ համարով, այլ ոչ թե «պրիմով»: Այդ առումով լրացվող հոդվածն անհրաժեշտ է համարակալել «Հոդված 17.1» համարով:

Նախագիծը չի բխում նաև «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներից, որոնց համաձայն նորմատիվ իրավական ակտի ոճն իմպերատիվ-հրամայական ու պաշտոնական է, մինչդեռ ներկայացված նախագծի դրույթները դեկլարատիվ բնույթի են, և այն անձանց համար, ովքեր չեն պահպանի նախագծով նախատեսված դրույթների պահանջները, որևէ պատասխանատվություն չեն առաջացնում:

Ելնելով նշվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքի նախագծի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս՝ հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Գևորգ Դանիելյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ****«Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին**

**Հոդված 1.** «Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության 1991 թվականի հունիսի 17-ի Հ. Ն. - 0333-1 օրենքը /այսուհետ՝ օրենք/ լրացնել հետեւյալ բովանդակությամբ 17<sup>1</sup> -րդ հոդվածով՝

«Հոդված 17<sup>1</sup> ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու կամ կրոնական այլ կազմակերպությունների դավանական պատկանելիության վանքեր, եկեղեցիներ կամ պաշտամունքային այլ շինություններ կառուցելը, ամրակայելը, նորոգելը կամ վերականգնելը իրականացվում է համապատասխանաբար Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու կամ կրոնական այլ կազմակերպության հետ խորհրդակցությունների հիման վրա, ինչպես նաև քաղաքաշինության բնագավառի կառավարման պետական լիազորված մարմնի եզրակացության առկայությամբ: Ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից այդպիսի նախաձեռնությամբ հանդես գալու դեպքում ՀՀ Կառավարությունը կարող է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հետ խորհրդակցությունների հիման վրա նրանց առաջարկել առաջնահերթության կարգով ամրակայել, նորոգել կամ վերականգնել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու դավանական պատկանելիության այն վանքերը, եկեղեցիները կամ պաշտամունքային այլ շինությունները, որոնք ունեն պատմական հուշարձանի կարգավիճակ: Այդ առաջարկությունը չընդունելը չի կաչող հիմք հանդիսանալ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից վանքեր, եկեղեցիներ կամ պաշտամունքային այլ շինություններ ամրակայելու, նորոգելու կամ վերականգնելու համար»:

**Հոդված 2.** Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրվանից

**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ****«ԽՂՃԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ  
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԻՆԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Օրենքի ընդունումը պայմանավորված է ֆիզիկական եւ իրավաբանական անձանց կողմից Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու կամ կրոնական այլ կազմակերպությունների դավանական վանքեր, եկեղեցիներ կամ պաշտամունքային այլ շինություններ կառուցելու, ամրակայելու, նորոգելու կամ վերանորոգելու հիմնահարցերը կանոնակարգելու անհրաժեշտությամբ: Օրենքի նախագիծը հիմնովին լրամշակվել է իմ կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով 2007թ. հուլիսի 31-ին շրջանառության մեջ դրված «Հայաստանի Հանրապետության եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» օրինագծի վերաբերյալ Կառավարության /27.08.2007թ./ եւ Աժ աշխատակազմի օրենսդրական վերլուծության վարչության /22.08.2007թ./ եզրակացություններում կատարված առաջարկությունների եւ դիտողությունների հիման վրա: